ԻՆՉ ԵՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ

ԵԼԵՆԱ ԲՈՆՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ

ՕՍԼՈՅՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ՝ 1990 Թ. ՕԳՈՍՏՈՍ

1988 թվականի փետրվարին բախում ծագեց Ադրբեջանի ու Հայաստանի միջև՝ վարչականորեն Ադրբեջանին ենթակա Լեռնային Ղարաբաղի մարզխորհրդի նստաշրջանի որոշումից հետո՝ խնդրելով ԽՍՀՄ կենտրոնական մարմիններին Հայաստանին միանալու մասին: Այդ որոշումն արտացոլում էր Լեռնային Ղարաբաղի բնակչության ճնշող մեծամասնության կամքը (մարզի բնակչության 75 տոկոսը կազմում են հայերը): Այդ որոշման օգտին քվեարկել են մարզխորհրդի 124 պատգամավորներից 121-ը:

Հայաստանի հետ վերամիավորվելու հայերի ձգտումը բացասականորեն ընկալվեց Ադրբեջանի կառավարության կողմից և Մոսկվայում, չնայած միասնական պետության պայմաններում, որպիսին երեք տարի առաջ ԽՍՀՄ-ն էր, Ղարաբաղի միացումը Հայաստանին ոչինչ չէր ավերում: Պահպանվում էին բոլոր տնտեսական կապերը, բայց Ղարաբաղի ժողովուրդը կստանար հնարավորություն ապրելու հարազատ լեզվի, մշակույթի ու կրոնի շրջապատում, և խթան՝ երկրամասի տնտեսության զարգացման համար, որի մեջ Ադրբեջանի իշխանությունները ներդնում էին ոչ բավարար միջոցներ: Բացի դրանից, նրանք ամեն կերպ խոչընդոտում էին մշակութային կապերին. չկային հեռուստահաղորդումներ Հայաստանից, քչացվում էր հայկական դպրոցների թիվը, փակվում էին հայկական (քրիստոնեական) եկեղեցիները, ավերվում էին քրիստոնեական պատմության հուշարձանները: Ղարաբաղի հայերը փաստորեն ոչնչացվում էին որպես մշակութապատմական էթնոս: Որ իմ պնդումը հայամետ տենդենցի արտացոլում չէ, կողմնակի ապացույց է այն, որ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը 1988 թվականի ամռանը հաստատել է Ղարաբաղի տնտեսական ու մշակութային հետամնացությունը Ադրբեջանի կազմում և 400 միլիոն ռուբլի է հատկացրել նրա զարգացմանը: Բայց այդ փողերը մինչև Ղարաբաղ չհասան, այլ մնացին Ադրբեջանում:

Դեռ մինչ այդ Ադրբեջանում թնդաց հակահայկական արյունալի ջարդերի ալիքը՝ սպանվածների, հրկիզվածների, բռնհարարվածների մեծ քանակությամբ: Ամենասոսկալի ջարդերից մեկը եղավ Սումգայիթում՝ ժողովրդական պատգամավորների նստաշրջանի փետրվարյան որոշումից հետո: Ինն ամիս բռնությունը միայն ադրբեջանցիների կողմից էր: Հայաստանը հույսը դրել էր արդար դատի վրա: Բայց զանգվածային լրատվության միջոցներն ու կենտրոնը ադրբեջանամետ դիրքորոշում բռնեցին: Ձմռանը, 1989 թվականի սկզբին, բռնությունը դարձավ երկկողմանի:

Ես գտնում եմ, որ իշխանությունը Մոսկվայում, չկարողանալով կամ չցանկանալով բարձրացնել հիմնահարցը ու այն լուծել պաղամենտական ճանապարհով, Ղարաբաղի ժողովրդին հասցրեց ցեղասպանության եզրին: Միաժամանակ դեստրուկտիվ գործընթացներ են տեղի ունենում Հայաստանում՝ վնասված երկրաշարժի ստրեսով, փախստականներով լի,— այսօր հանրապետությունում 5 միլիոն բնակչությանն ընկնում է շուրջ 1 միլիոն անօթևան... Բանակը կանգնած է Ադրբեջանում, Հայաստանում և Ղարաբաղում: Նրա ներկայությունը նվազեցնում է բռնությունների քանակը, բայց ավելացնում է հոգեբանական ճնշումը: Ղարաբաղում սկսվել է հայ բնակչության բռնի տեղահանությունը այն պատրվակով, որ բանակը չի կարող ապահովել անվտանգությունը:

Անդրեյ Սախարովի խոսքերը՝ «Ադրբեջանի համար Ղարաբաղը հեղինակության հիմնահարց է, Հայաստանի համար կյանքի հարց», հնչում է, ինչպես երբեք, իրատեսորեն ու ողբերգական: Ես անհրաժեշտ ու հնարավոր եմ համարում շուտափույթ ստեղծումը անկախ ու հեղինակավոր միջազգային հանձնախմբի, որը իրավունք ձեռք կբերեր աշխատելու Անդրկովկասի այդ շրջանում, կկարողանար իրապես ուսումնասիրել իրադրությունը Ադրբեջանում, Հայաստանում և մշտապես մնալով Ղարաբաղում, կանխել այդ շրջանում ապրող բնակչության ցեղասպանությունը: Այսօր Ղարաբաղը գործնականում փակված է մամուլի համար (ոչ միայն արևմտյան, այլև խորհրդային) և բոլոր մարդկանց համար, բացի այնտեղ ապրողներից: Այն սովի եզրին է: Այնտեղ աղետալի կերպով չի հերիքում ջուրը, չկան դեղորայքներ, շրջափակվում է հեռախոսային կապը ու շարունակվում բռնությունը: Միջոցներ հավաքելն ու այնտեղ ուղարկելն անիմաստ է, որովհետև ամեն ինչ մնում է ինչ-որ ուրիշ վայրերում, չքանում է, ինչպես չքացավ բազմամիլիոն օգնությունը Հայաստանին՝ երկրաշարժից հետո: Եթե մենք չկարողանանք շուտափույթ կերպով Ղարաբաղի փրկության հանձնաժողով ստեղծել, ապա շատ շուտով մենք բոլորս ամաչելու ենք:

Ես այսօր բարի կամքի բոլոր մարդկանց կոչ եմ անում փրկել Ղարաբաղի հայ ժողովրդին: